

# ԱՐԱՐԱՏ

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԵՏՐՈՎԱԿԱՆ, ԲԱՆՆԱԿԱՆ, ԲԱՐՈՍԵՎԱԿԱՆ ԵՒ ԱԶԻՆՏԻՆ՝

ԹԻԻ Ա. — ՇՐՋԱՆ Ը.

1875

ՏԱՐԻ Է. — ՅՈՒՆՎԱՐ 34

### ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Երբեք երբ քիչ է ժողովրդիս).

Երբեք է նորհալոյ առ Մանուէլ կայսրն Յունաց փոխարինած պատասխանը շատ հետաքրքրական և խորին ուշադրութեան արժանի է, յորում անկեղծ ոգւով և քրիստոնէական ճշմարտասէր եռանդեամբ՝ իբրև հրեշտակ իմն խաղաղութեան՝ վարդապետական բանիւք կը ջանայ կայսր կարծրացեալ սիրտը ամոքել և կակղացնել՝ յորդորելով ի սէր և ի խաղաղութիւն՝ առանց ունին տալոյ չարագրգիռ նախանձու, առանց հպարտութեան: Երբ թէ կայսր բուն միտքը չը հասկանալով, և ի վերին երես ձեացուցած երկուց եկեղեցեաց և ազգաց ի սէր և ի միութիւն առաջնորդելոյ անխօսնջ ջանք կանսէ և կգովէ զնա, բայց կյաւելուցոյց տալ թէ նոյն նպատակի հասանելոյ համար որպիսի խոհեմ և զգոյշ ընթացք բանել պէտք է, և թէ եղած ստեղծութիւնք՝ հարածանքն և հայհոյութիւնք երբեք չեն կարող նոյն նպատակին օգնել, որք թէ և ձեզն շատերուն համար արդարութիւն,

աստուածայիև օրինաց կատարման վրէժխնդրութիւն և երկնից արքայութիւնը ժառանգելոյ միջոցներ կհամարուին՝ ձեր իշխանութեան ներքև գտնուած մեր (Հայոց) եկեղեցիքը աւերելով, խաչերը խորտակելով, սեղանները կործանելով, պաշտամունքները ծաղրելով, պաշտօնեայքը նեղելով և հալածելով՝ այնքան չափազանց և առաւելութեամբ, զի անհատաներէն (քրիստոնէայ չեղող) անգամ այնպիսի վատութիւններ չեմք կրեր՝ գրած է դեռ շատ երկար և կարևոր ակնարկութեամբք և պարունակութեամբք:

Ե նորհալոյ օրով ևս պատրուակեալ միութեան խնդրոյ վերայ բաւական թըղթակցութիւնք և երթևեկութիւնք եղած են, սակայն Յոյնք՝ ինչպէս նաև Յունաց եկեղեցական պաշտօնէութիւնն և կայսր երբեք գոհ եղած չէին. և ինչպէս կարող էին գոհ մնալ՝ քանի որ բուն խաղախ նպատակը չէին կարող ի գլուխ տանել: Թէ ըստ կրօնականին և թէ ըստ ժողովրդականին ինչ որ խնդիր և առաջարկութիւն կյարուցանէին, ի Հայոց և ի Հայրապետէ շատ զեղեցիկ և պարզ պատասխանները կստանային: Բայց և այնպէս չէին հանդարտեր, և կտքնէին ինչպէս կրօնադո-

լա-Յի-ն կարծեցնել կամ ցուցանել, մինչդեռ կրօնամտութեան ծայրայեղութենէ աւելի դառն և վատթար մի նպատակ ունէին, որում կարող էի աւելի յարմար բացայայտիչ անուն տալ՝ եթէ անկախ յինէն հանգամանք ինչ արգելք չլինէր, սակայն չեմ կարող ևս այս խընդիրը գէթ գոյն ինչ շարժարժած անցնիլ:

Յոյնք բաւական խորամանկ և նենգուպատիր միջոցներ հնարելէ և ի դորժ արկանելէ զինի՝ այլ ևս համբերութեան անդ չմնաց, և (1172 Փ. թուին) պարզապէս ինն խնդիր առաջարկեցին առ Շնորհալին Ներսէս:

Մենկորդ (վերջին) առաջարկութիւնն էր՝ զի Հայոց Աթուղիկոսի գրեթէ ընտրութիւնը և հաստատութիւնը Յունաց թագաւորն պիտի կատարէր: Եհաւասիկ այս էր բուն և առաջին խնդիր, որոյ ներքև ճրագրեալ էր Հայոց Եզզի և Ակիղեցւոյ ազատութիւնը և անկախութիւնը՝ ինչպէս նաև գոյութիւնը՝ հեազհետէ ջնջիլ:

Ներսէս Շնորհալի անշուշտ քաջ դիտէր վտանգը, և սիրտը ծանրապէս կը ճմլուէր, բայց դարձեալ համբերատար ոգւով՝ խոհեմութիւնը և աշխարհավարական ուղղութիւնը շարունակեց, և պատճառելով որ՝ ինչպէս Հայոց՝ նոյնպէս Ապիսկոպոսաց բազմութիւնն ի Մեծ Հայս և Երևելեան Եշխարհի մջ կն, և առանց ընդհանուր եկեղեցական և ազգային Ժողով կազմելոյ և ի միասին խորհելոյ և հաւանելոյ՝ ինքնին կամ մասնաւոր եղանակաւ չէր կարող բոլոր առաջարկութեանց վճռական պատասխանները

տալ, որպէս զի Եզզի մջ երկպառակութիւն չծագի և աւելի փնասակար հետեւանք յառաջանայ: Աւստի ամեն կողմ հրաւերներ ուղղեց ազդ առնելով շարժում խնդիրները, և կկնդրէր աղօթից ապաստան լինել և պատրաստ կալ՝ զի երբ կրկին հրաւիրանաց թուղթեր ստանան՝ ժամադրեալ ժամանակին դան հասնին առ ինքն ի Հռովմա:

Սակայն զեռ հրաւերը չերկրորդած՝ Երանելին Ներսէս առ Աստուած կփոխուի, և այսպէս կազատուի յիշեալ ծանր վտանգի պատասխանատուութենէն և սրտամաշ հոգսերէն: - Ի հարկէ՝ եթէ Յունաց ղիբք և լայնատարած տէրութիւն՝ հզօր, և նոցա գէմ՝ Հայոց նոր ի նորոյ զարգանալոյ վերայ եղած ղիբք՝ տկար չլինէին, ինչպէս նաև Յունաց իշխանութեան և տիրապետութեան ներքև եղած երկիրնէրում շատ Հայեր չզանուէին, երկնչելոյ առիթ և վտանգի տեղ չէր լինէր: -

Արկին յիշատակութեան և զովեստից արժանի է Շնորհալոյն այսպիսի վտանգաւոր ժամանակի և կնճռոտ խնդրոյ մջ տաղնապած միջոցում՝ Հայոց գրականութիւնը և դաստիարակութիւնը խրախուսել և առաւելապէս արդիւնաւորին, և թէ սորա օրով մեր գրականութիւնը սրբան ճոխացաւ և ընտիր ընտիր երկեր ընդունեցաւ, բաւական գրական հեղինակներ ծաղկեցան և զարգացան, զեղեցիկ հեղինակութիւնք և թարգմանութիւնք տարածուեցան շատ անդեր, Հայկական լեզուի մջ սպրդեալ ինչ ինչ խանգարմունքները ջնջուեցան, ինչպէս որ աւելի ճօխ և զեղեցիկ պատմադրուած է ազգային, եկեղեցական և դպրութեան պատմու-

Թեանց մէջ, յորս լիովին կարող է գաննել  
Հիտաբբէր ընթերցասէրն:

(Նորոշիչ)

Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԷՍԼԱՆՉՈՅ. ՈՒՐԱՅՈՂՈՅ,  
ՀԵՐՁՈՒԱՅՈՂԱՅ ԵՒ ՐԱԺԱՆԵԼՈՅ ՅԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԷԱՅՈՅ.

ՅԼՈՒԱԶԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Չպատմութիւն Հայածչաց Եկեղեցոյն Հայոց  
ուրացողաց, Հերձուածողաց և բաժանելոց՝ գրե-  
ցաք մեր Հեռակելով աղօցոյն պատմաբանից մե-  
րոց՝ Խորենացոյն և Յովհաննու Վաթուղիկոսի  
բաղդատութեամբ ընդ Չամչեանն կոչեցեալ պատ-  
մագրութեան, որպէս և զԹողոլոց Եկեղեցոյն Հա-  
յոց իրև առջին հատոր սորին հանդերձ Եկե-  
ղեցական կանոնագրութեանըն, ըստ զխակարգու-  
թեանց Աղիւսակին Միքայէլ Արքեպիսկոպոսի  
Սալլանդեան՝ կոչեցեալն ի նմանէ Պատմութիւն  
Եկեղեցոյն Հայոց յաղիւսակս համառօտեար տը-  
պապրեալ ի Մոսկով յամի 1841, որ է ցանկ մի-  
այն զխակարգութեանց պատմութեանս որպէս  
և ժողովոցն Վաթուղիկոսաց, թագաւորաց նա-  
հատակաց և թարգմանչաց, բովանդակելոց ի վից  
աղիւսակս զորոց ամենից զպատմութիւնսն յանձն  
առեալ ենք գրել ըստ այսմ կարգի, եթէ Տէր  
յաջողեցէ մեզ յետ այսորիկ, մաքրելով զամե-  
նեցուն անցս ի սուտակասպաս և ի պատուատեալ  
պատմագրութեանցն Չամչեան, որ զանունն գնելով  
այնմ եռահատոր մատենի Պատմութիւն Հայոց,  
ստուարացուցեալ է զայնս գրեթէ բովանդակ ստու-  
թեամբ բանից ի հաճոյս Հռոմայ ընդ դէմ ստու-  
գրութեան գրուածոց նախնացն մերոց մատե-  
նարաց և պատմաբանից, և այս յաւետ ի վեպս  
պատմութեան անցից Վաթուղիկոսաց Ազգիս ի  
յետին դարս որոց եկեղեցական կառավարութիւն  
ազգի մերոյ եղեալ է ընդ տեսութեամբ և ընդ ի-  
րաւասութեամբ պատկն Հռոմայ շինուածոյ թըղ-  
թոց և ինքնահնար նամակաց յանուն Վաթուղի-  
կոսաց Ազգիս որոց և ոչ հետք երևին առ ազ-  
գային պատմադիրս և ոչ ի զիւանս Վաթուղիկոսաց  
մերոց:

Այս եղև մեզ առիթ զխաւոր գրելոյ զՊատ-  
մութիւն Եկեղեցոյս մերոյ ի վից առանձին դիրս  
ըստ վիցից աղիւսակաց Սալլանդեան Միքայէլի՝ որ-  
պէս ասացաք, յորոց նախ զերկուս զայսոսիկ զպատ-  
մութիւն Թողոլոց և զպատմութիւն Հայածչաց  
Եկեղեցոյն Հայոց զխաւորելով, զչորեակն ևս  
ըստ այսմ կարգի գրել ունիմք Տեառն յաջողու-  
թեամբ յետ այսորիկ, եթէ ձեռնտու լիցի մեզ և  
ժամանակն:

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հայոց Եկեղեցոյն հայաժողով, սրբապետ,  
հերձուածող բաժանեալ, բռնաորդ, ևլն:

ՅՕԿ. Ա.

Անուն է Սնորոշիչ ինքնորդ հայաժողով:

(Եմք Տեառն 34): Ենանէ որդի Աբ-  
գարու յետ մահու հօրն թագաւորէ Հա-  
յոց Աղեւսիս, և Սանատրուկ քեռորդի  
Աբգարու հակառակ Ենանեայ՝ ի Շա-  
ւարշան, և նախարարք Հայոց թողեալ  
զհաւատս և ոչ անագան ի կռապաշտու-  
թիւն դարձեալք, յայն շրջեցին և զմիտս  
Սանատրիկոյ՝ մերժելով զօրէնս քրիս-  
տոնէութեան, յոր ինքեանք յիջկիւղէ  
Աբգարու կեղծաւորութեամբ առ երեսս  
զառաջինն հաւատացեալքն էին:

Այսպէս և Ենանեայ զքրիստոսական  
հաւատն թողեալ, բանայ զտաճարս կը-  
ռոցն Աղեւսիս և խորհէ բառնալ ըզ-  
Փրկչական պատկերն որ ի վերայ դրան  
քաղաքին, դժկամակեալ ընդ դործս Ժո-  
ղովրդեան որք ի պատիւ պատկերին կան-  
խէին: Այլ Աղդէ եպիսկոպոսի աստուա-  
ծային յայտնութեամբ իրացն կանխագէտ  
լեալ, յանյայտս ծածկէ յորմն ի զիշերի  
զատուածային պատկերն, առ որ և խոր-  
հուրդ թագաւորի ի մտացն անկանէր  
յաստուածային խնամոց: